

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**ԺԵՆՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ****ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՕՏԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ
ՈԼՈՐՏՆԵՐԸ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ****DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i69.174****ԱՄՓՈՓՈՒՄ**

Սույն հոդվածում լեզվաբանական վերլուծության ենք ենթարկել ավագ դպրոցում ուսուցանվող գեղարվեստական երկերում տեղ գտած օտարաբանությունները: Մասնավորապես անդրադարձել ենք այն իրողություններին, որոնք կարող են աշակերտի խոսքի մաքրության դժվարություն առաջացնել: Ըստ այդմ անդրադարձել ենք հնչյունային, բառային և շարահյուսական մակարդակներում հաճախ հանդիպող անճշտություններին: Ցույց ենք տվել օտար բառերի և փոխառությունների առնչությունները՝ համեմատություն անցկացնելով հարցի շուրջ տարբեր լեզվաբանների կարծիքների միջև: Լեզվաբաններից շատերը իրենց աշխատանքներում որոշ փոխառություններ համարել են օտար բառեր, որով խոչընդոտ են ստեղծում օտարաբանությունների ընկալման և առհասարակ բառապաշարի մեջ դրանց ընդգրկման համար: Ելնելով ավագ դպրոցի աշակերտների շրջանում անցկացրած հետազոտության արդյունքներից՝ ցույց ենք տվել, թե որոնք են այն հիմնական պատճառները, որոնք թույլ չեն տալիս օտարաբան կազմություններին իրենց տեղը զիջելու հայերեն համարժեքներին: Ուսումնասիրելով ավագ դպրոցի ծրագրային երկերից մի քանիսը՝ ուշադրություն ենք դարձրել դրանցում գործածված օտարաբանությունների գործածման հաճախականությանը: Գեղարվեստական երկերում նման օտարաբանությունների կիրառման ծավալները հաշվի առնելով էլ առաջարկել ենք ավագ դպրոցի 10-րդ, 11-րդ և 12-րդ

դասարաններում մշտապես անդրադառնալ այս հարցին, բացատրել նման կիրառությունների ոչ հարկի լինելը և սովորեցնել դրանց հայերեն համարժեքները: Ցույց է տրված օտարաբանությունների կիրառման ոլորտներն արդի գրական հայերենում, թե՛ առօրյա-խոսակցական, թե՛ գրական-գեղարվեստական ոճերում:

Հետազոտությունը որպես ուղեցույց կարող է ծառայել ուսուցիչներին օտարաբանություններն ուսուցանելիս:

Բացի այդ, շահեկան է մշակել համապատասխան մեթոդական նյութեր, որոնք կհեշտացնեն թե՛ ուսուցիչների, թե՛ աշակերտների աշխատանքը՝ նպաստելով լեզվամաքրման գիտակցված գործընթացի խորացմանը: Նման մոտեցումը կարող է հիմք դառնալ լեզվական քաղաքականության զարգացմանն ուղղված նորարարական կրթական նախաձեռնությունների համար:

Բանալի բառեր և բառակապակցություններ. օտարաբանություններ, փոխառություններ, բառային, հնչյունային և շարահյուսական օտարաբանություններ, քմայնացում, շարահյուսական խնդրառության սխալներ, ճիշտ թարգմանություն, մաքրամոլություն, բառապաշար և բառի ծագումնաբանություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայերենի մաքրության խնդիրն առավել հրատապ է մեր օրերում, քանի որ նկատելի է ժամանակակից տեղեկատվական ոլորտի առաջընթացի՝ օրեցօր աճող արագությունը և դրան զուգահեռ օտար բառերի մուտքը մեր լեզու: Այն օտար բառերը, որոնք, իրենց հայերեն համարժեքներն ունենալով, շարունակում են գործածվել մեր լեզվում, կոչվում են օտարաբանություններ: Օտարաբանություններն ուսուցանելիս հարկ է վեր հանել ծրագրային գեղարվեստական ստեղծագործություններում տեղ գտած օտար բառերը և դրանց հիման վրա մշակել այնպիսի մեթոդաբանություն, որով կարող ենք աշակերտներին զերծ պահել մեր լեզվում տեղ գտած անցանկալի օտար բառերից,

որոնք իրենց անհարկի ազդեցությունն ունեն ոչ միայն բառային մակարդակի, այլ նաև քերականության վրա:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ աշակերտները գեղարվեստական երկերում պարբերաբար առնչվում են օտար բառերի՝ հաճախ չիմանալով դրանք և չտիրապետելով դրանց հայերեն համարժեքներին: Ուսումնասիրության օբյեկտը օտարաբանությունների ըմբռնման, բառապաշարի հարստացման մեջ նրանց գիտակցման գնահատման և ուսուցման գործընթացն է: Լեզվաբանական գրականության մեջ տեսականորեն բազմիցս ուսումնասիրվել են ժամանակակից հայերենի օտարաբանությունները, սակայն ոչ միշտ է անդրադարձ կատարվել նրանց գործածության պատճառներին: Մինչդեռ մեր օրերում օտարաբան բառերը սկսում են փոխարինվել իրենց հայերեն համարժեքներով, որով արդեն իսկ օտարամուտ բառերը դուրս են մղվում մեր լեզվից:

Հետազոտության նպատակն է օտարաբանություններն ուսումնասիրել ավագ դպրոցի ծրագրային գեղարվեստական երկերում, բացահայտել նրանց գործածության յուրահատկությունները թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքերում:

Մեր կատարած հետազոտության հիմնական խնդիրներն են՝

1. ուսումնասիրել օտարաբանությունների ըմբռնումը լեզվաբանական գրականության մեջ,
2. վեր հանել օտարաբանությունների գործածման հիմնական պատճառները արդի գրական հայերենում,
3. հետազոտական աշխատանքների միջոցով ներկայացնել ավագ դպրոցի աշակերտների իմացությունը օտարաբանությունների մասին:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Համադրելով ավանդական և ժամանակակից մեթոդները՝ ստեղծել ենք այնպիսի մեթոդական համակարգ, որը թույլ կտա բարձրացնել թեմայի տեսական և գործնական յուրացումը: Օտարաբանությունները ավագ դպրոցի գեղարվեստական երկերում ուսումնասիրելու համար նախ կիրառվել է

որոնողական էմպիրիկ մեթոդը, որի միջոցով տարբեր ստեղծագործությունների բառային շերտից առանձնացվել են օտարաբանությունները: Հարցաթերթիկի օգտագործման միջոցով պարզել ենք օտար բառերի կիրառման հիմնական պատճառները ավագ դպրոցի աշակերտների շրջանում: Համեմատական մեթոդով վեր ենք հանել օտարաբանությունների և փոխառությունների տարբերակման հիմնական սկզբունքները, տարբեր լեզվաբանների մոտեցումները: Ուսումնական գործընթացի վերլուծության միջոցով ուսումնասիրել ենք ավագ դպրոցի առարկայական չափորոշիչները և ծրագրերը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Քննելով ավագ դպրոցի պետական ծրագրով նախատեսված գեղարվեստական գրականության մեջ գործածված օտարաբանությունները՝ համեմատել ենք դրանք փոխառությունների գործածման հաճախականության հետ: Խնդրո առարկա օտարաբանությունները քննելիս դասագործընթացում հաճախ դժվարություն է առաջանում փոխառյալ և օտար բառերը տարբերակելիս:

Շատ փոխառություններ ժամանակի ընթացքում վերածվել են օտարաբանությունների, քանի որ ստեղծվել են դրանց հայերեն համարժեքները: Սա բնականոն գործընթաց է, քանի որ գիտատեխնիկական զարգացմանը զուգընթաց լեզուներում պահանջ է առաջանում անվանել նոր երևույթներն ու առարկաները, և, ինչպես նշում է Լ. Եզեկյանը իր «Հայոց լեզվի ոճագիտություն» գրքում, երբ արդեն այդ բառերի գրական համարժեքները ստեղծվում են, տվյալ փոխառյալ անվանումները դառնում են օտարաբանություններ (**Եզեկյան Լ., 2007**), օրինակ՝ *կոնսուլտացիա-խորհրդավորություն, միտինգ-հանրահավաք, ռոճիկ-աշխատավարձ, սխեմա-կառուցվածք* և այլն:

Նկատել ենք, որ լեզվաբան Ա. Հայրապետյանը իր «Օտար բառերի բառարանում» (**Հայրապետյան Ա., 2011**) մի շարք փոխառյալ բառեր դիտարկել է որպես օտար բառեր: Նշենք այդ բառերից մի քանիսը՝ *խան, խալիֆա, շեյխ, սուլթան* (**Հայրապետյան Ա., 2011**) և այլն: Այս բառերը հայերենում եղել են փոխառյալ բառեր, որոնք ժամանակի ընթացքում դուրս են մնացել մեր բառային

շերտից և դարձել հնաբանություններ: Նման դիտարկումները կարող են խոչընդոտ դառնալ օտարաբանությունները տարբերակելու հարցում:

Լեզվաբանական գրականության մեջ տարբերակում են օտարաբանությունների երեք տեսակ՝ հնչյունային, բառային և քերականական (շարահյուսական):

Չնայած որ բառային օտարաբանությունները հայերենում ունեն իրենց համարժեք թարգմանությունները, այնուամենայնիվ դրանց մի մասն այդպես էլ չի դառնում համագործածական: Սա ունի մի քանի պատճառ: Դրանք փորձել ենք վեր հանել և դասակարգել մեր կատարած հետազոտական աշխատանքի արդյունքներից: Հետազոտությունն իրականացրել ենք ավագ դպրոցի 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարանների աշակերտների մասնակցությամբ: Նրանք լրացրել են նախապես կազմված հարցաթերթիկները: Ըստ աշակերտների տված պատասխանների՝ նկատեցինք, որ որոշ օտար բառեր ավելի հաճախ են գործածվում մի քանի պատճառներով. օտար բառի թարգմանությունները երկարահունչ են, օր.¹ *պուլտ-հեռակառավարման վահանակ, դիվերսիա-խափանարարություն, կուբիզմ-խորանարդապաշտություն* և այլն, թարգմանված տարբերակները հաճախ անբարեհունչ են, օր.² *ջենտլմեն-օրիորդապնդիչ, ջազ-պղնձաժխոր, տրոյլեբուս-ինքնապողասայլակ, տրակտոր-ինքնաբրդբրդիչ, շամպայն-փրփրագմփիկ* (նշենք, որ նման բառերը արհեստածին են. չեն մտնում գործածության մեջ և շատ արագ դուրս են մղվում հանրության կողմից) և այլն, կան բառեր, որոնց դիմաց հայերենն ունի մի քանի թարգմանություններ, ինչն էլ խառնաշփոթ է առաջացնում, օրինակ՝ *ինֆորմացիա-լրատվություն, տեղեկույթ, տերմին-գիտաբառ, եզրույթ* և այլն, կան բազմաթիվ երևույթներ, որ հայերեն հատուկ տերմիններ չունեն, իսկ եթե կան բառագրքերում, ապա դրանք չեն արտահայտում երևույթի էությունը, և միաժամանակ գործածվող տերմինները հաճախ ընդհանուրի համար հասկանալի և ընդգծված չեն (Իշխանյան Ռ., 1981), կան բառեր, որոնք ունեն կարճ, բարեհունչ թարգմանություն, սակայն խոսողին այն ծանոթ չէ, օրինակ՝ *սավոկ-աղբաթի, պլաստիլին-ծեփոն, դիսպերչեր-*

կարգավար և այլն, կան օտար բառեր, որոնք այնքան մեծ տարածում ունեն, որ թույլ չեն տալիս՝ թարգմանությունը դառնա գործածական, օրինակ՝ *կինո-շարժանկար, կենդուրու-ազեվազ, անանաս-արքայախնձոր* և այլն:

Յուրաքանչյուր լեզվի հնչյունային համակարգն ավելի կուռ է, ուստի լեզվի այս մակարդակը օտարամուտ բառերի ներթափանցման հարցում առավել կայուն է: Այս հարցին անդրադարձել է Հ. Զաքարյանը՝ «Օտարաբանությունների արտամղման միտումը հայերենում» հոդվածում (**Զաքարյան Հ., 2002**): Հայոց լեզվի այս մակարդակում օտար ազդեցությունների հետևանքները սահմանափակվում են մի քանի մասնակի երևույթներով, որոնք, կարելի է ասել, գրեթե չեն հասնում գրական լեզվի մակարդակին, այլ շատ հաճախ մնում են բանավոր խոսքի տիրույթում:

Հատկապես վտանգավոր են օտարաբան կապակցությունները կամ այլ կերպ ասած՝ շարահյուսական օտարաբանությունները, որոնց օտար լինելը առաջին հայացքից չի զգացվում, և այդ պատճառով դրանք տարածվում և սկսում են գիտակցվել իբրև հայերեն կապակցություններ: Շարահյուսական օտարաբանությունները ավելի դժվար ենք տարբերում թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքերում:

Գեղարվեստական տեքստը մայրենի լեզվի ուսուցման համակարգում կարևորագույն միավոր է: Գործնական աշխատանքի ընթացքում լեզվի ավանդումը մեծ չափով կապվում է գրական ընթերցանության հետ, և հակառակը՝ գրական ընթերցանությունը հաճախ կապվում է լեզվի ավանդման հետ: Գրականությունը կարող է լավագույն միջոց դառնալ աշակերտի լեզվական կարողությունները մշակելու համար (**Ղարիբյան Ա., 1954**):

Հայ հեղինակների ստեղծագործություններում բնականաբար սակավ են շարահյուսական օտարաբանությունների կիրառությունները: Նմանատիպ օտարաբանությունների կիրառություններ տեղ են գտել դպրոցական ծրագրային երկերում: Հանդիպում են շարահյուսական օտարաբանություններ՝ մի շարք կապերի սխալ գործածությամբ: Հարկ է նշել, որ կապերի նշված

կիրառությունները մեր լեզվում հաճախակի են դարձնում խնդրառական սխալները: Գործուն են հատկապես *հեղ*, *համար*, *վրա*, *մոտ* կապերով ձևավորված այնպիսի կապակցություններ, որոնք խորթ են մեր լեզվամտածողությանը:

Հաճախ *հեղ* միասնության կապը օգտագործում են *դեմ* կապի փոխարեն, ինչը խորթ է հայերենի լեզվամտածողությանը. «Բայց ինչ հրաշալի բան է եղել *կո՛վըլ անոնց հեղ*, երբ անոնք իրենց լույծ կուրծքը դեմ կուտան քեզի, երբ իրենց փրփուրը կգարնեն երեսիդ ու աչքերուդ, որ կուրցնեն քեզի» (Լևոն Շ., 1989): «Երևակայեցե՛ք՝ մի քանի հազար քրդեր մի քանի շաբաթ շարունակ *կովում էին* այդ մի բուռն քաջերի *հեղ*, որոնք ոչ միայն հանձն չառեցին անձնատուր լինել, այլև մի քանի հաջող հարձակումներ գործելով՝ կարողացան խլել թշնամուց հարուստ ավար և պատերազմական պատրաստություններ» (Րաֆֆի, 1984):

Համար կապը շատ հաճախ հավելադրություն է դառնում նպատակի պարագայի կառուցատիպերում. «Ո՛վ ասես նրանից մի բան չէր սպասում ստանալ. վաճառականը ապրանք էր սպասում, կինը իր պանդուխտ ամուսնից նամակ էր սպասում, ճանապարհների վրա գտնվող մանր և խոշոր աստիճանավորները կամ պաշտոնատարները այս և այն իրեղեններն էին սպասում ուտելու, խմելու և հագնելու *համար*» (Րաֆֆի, 1984): Հաճախ են հանդիպում նաև *վրա* կապի կիրառության սխալներ. «Նա *սիրահարված է լինում մի աղջկա վրա* և ուզում է այդ աղջկա նկարագիրը տալ ընթերցողին...» (Նար-Դոս, 1978):

Ռուսաբանություն է նաև *մոտ* կապի կիրառությունը հետևյալ խոսքային միջավայրում. «Քեզ *մոտ* պետք է տանես ինձ» (Նար-Դոս, 1978):

Է հանգույցի փոխարեն հաճախ ռուսերենի ազդեցությամբ գործածվում են *հանդիսանում է*, *կայանում է*, *համարվում է* բառաձևերը. «Վերջիվերջո հիշեցի, որ այդպիսի դեպքերում առհասարակ նախապատրաստումը միանգամայն ավելորդ

է հանդիսանում...»)(**Նար-Դոս, 1978**): «Հարցը կայանում է նրանում, որ ես չեմ լսել պատասխանը»:

Գեղարվեստական որոշ երկերում հանդիպել ենք նախադասությունների, որոնցում գործածված *բան է* կառույցը ևս կարելի է դիտարկել որպես *է* հանգույցի փոխարեն գործածվող օտար ձև, օր.՝ «—Ցա՛վ. ի՞նչ *բան է* ցավ» » (**Լևոն Շ., 1989**): «Նրա գլուխը...Գիտե՛ս՝ ինչ *բան է* նրա գլուխը»— ականա միտս եկան Գարեգինի խոսքերը, ...» (**Նար-Դոս, 1978**):

Մեր գրավոր և բանավոր խոսքերում հանդիպում է նաև *ենթակա + դա* կաղապարը, որը մտել է հայերեն խոսք ուսերենից կատարված թարգմանությունների հետևանքով. «Արելությունը *դա* մարդու քունը խանգարող մի բան է»:

Գեղարվեստական ստեղծագործության մեջ գրողը, միջավայրը ներկայացնելու և հերոսի կերպարը անհատականացնելու նպատակով ըստ անհրաժեշտության գործածում է օտար բառեր, որոնք բառապաշարի մի մասն են կազմում: Գրական լեզվի համար անցանկալի և անթույլատրելի օտար բառերի, շարահյուսական օտարաբանությունների գործածությունները գեղարվեստական խոսքում ոճական-արտահայտչական առումով արժևորվում են նրանով, որ ստեղծում են օտար միջավայրի, տարբեր ժողովուրդների կենցաղի ազգային գունավորում, հանդես են գալիս նաև որպես երգիծանքի միջոց և անհատականացնում են հերոսների խոսքը:

Խնդրո առարկա օտարաբանությունների քննության համար ընտրել ենք Ռաֆֆու «Խենթը» վեպում գործածված օտար բառերը: Ստեղծագործության մեջ հանդես եկող օտարաբանությունները հիմնականում գործածված են ոճավորման նպատակով: Մենք դրանք դասակարգել ենք՝ լեզվաբանական մի քանի սկզբունքներ հիմք ընդունելով: Դասակարգումն իրականացրել ենք նախ ըստ բառերի ծագումնաբանական շերտի: Ըստ այդմ՝ օտարաբանությունները մեծ մասամբ եվրոպական (գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն) լեզուներից վերցրած բառեր են. «Բերդապահի ձին և *արտիլերիայի* ձիաները բոլորը մորթել և կերել

էին» (Ֆրանս.) **(Րաֆֆի, 1984)**: «-Քսան հազարը քիչ չէ, տե՛ր, երբ առջևում հազար հատ *սալդաթ* չկա» (գերմ.) **(Րաֆֆի, 1984)**: «Տանուտերի օդան, այդ գյուղական *կլուբը*, դեռ մատչելի չէր կանանց հասարակությանը» (անգլ.) **(Րաֆֆի, 1984)**:

Նկատելի է, որ հեղինակի խոսքում գերակշռում են արևելյան (պարսկերեն, արաբերեն) փոխառությունները, որոնք տվյալ ժամանակամիջոցում լայն տարածում են ունեցել, սակայն հետագայում կարգերի փոփոխմանը զուգահեռ դուրս են մղվել լեզվից:

«Խենթում» գործածված օտարաբանությունների մեջ առանձնանում են այնպիսիները, որոնք հայերենին են անցել լատիներենից և հունարենից թերևս նոր լեզուների միջնորդությամբ. «Փոքրաթիվ ռուս զինվորներ, հայ և թուրք կամավոր *միլիցիայի* հետ ամրացել էին այնտեղ և օրհասական հուսահատությամբ սպասում էին մի սարսափելի վախճանի» (լատ.) **(Րաֆֆի, 1984)**: « -Զէ՛, ակա՛նջ դրեք, այդ նրա *սիզնալն* է, լսու՛մ եք ագռավի կոնչյունը...» (լատ.) **(Րաֆֆի, 1984)**: «Այդ լուսավորության մեջ, որպես մի հսկա *պանորամայի* մեջ, մինը մյուսի ետևից հանդիսանում էին ավելի ու ավելի զարհուրալի պատկերներ» (հուն.) **(Րաֆֆի, 1984)**:

Այս կամ այն լեզուն օտար բառեր վերցնելիս դրանք հարմարեցնում է իր արտասանական օրինաչափություններին: Բոլոր լեզուները ենթարկվում են այս կանոնին, և հայերենը բացառություն չի կազմում: Օտար բառերի կիրառության հարցին անդրադարձել է Ռ. Իշխանյանը. օտար բառերը վերցնելու դեպքում ի՞նչ ձևով գործածել հայերենի մեջ՝ նույնությամբ, թե՞ հայացված հնարավորին չափ:

Քննություն կատարելիս համոզվեցինք, որ Րաֆֆին օտարաբանությունները գործածել է թե՛անփոփոխ ձևերով, թե՛հայացված տարբերակներով: Հայտնի երևույթ է, երբ օտար հիմքին կցված են հայերենի բառակազմական մասնիկները **(Իշխանյան Ռ., 1981)**: «Խենթում» գործածված օտարաբանություններին հիմնականում ավելացված են հոգնակիակերտ մասնիկներ և հոլովական

վերջավորություններ. «Նամակները գրում էր ռուսաց հին ռիսերիմ, երևելի Շամիլի որդի գեներալ-լեյտենանտ Շամիլը, որ այժմ թշնամու բանակի մեջն էր գտնվում և նորին մեծություն սուլթանի *սվիտայի* համհարզն էր» (**Րաֆֆի, 1984**):

Հետաքրքրական են այն բառերը, որոնց օտար հիմքին ավելացված է հայերեն – *ական* ածականակերտ ածանցը. «Նա ոչ միայն հոգ էր տանում աշխատասեր հայ գյուղացու հանգստության համար, այլև պետության գանձային ամբողջ կառավարությունը հանձնել էր հայ դրամատերերի ձեռքը, և մեր սառաֆները ոչ սակավ անգամ ազատում էին պետությունը *ֆինանսական* ամենադժվարին ճգնաժամի ժամանակ»:

«Իսենթը» վեպից քաղված օտարաբանությունները դասակարգելիս նկատել ենք, որ այստեղ գերազանցում են ռազմական (*միլիցիա, արտիլերիա, օֆիցեր, սալդաթ* և այլն) և առօրյա-խոսակցական (*պանորամա, սիգնալ, լամպա, ռոչիկ, պորտսիգար* և այլն) ոլորտներում գործածվող օտար բառերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Օտար բառերի և փոխառությունների տարբերակման հարցում աշակերտները դժվարության են հանդիպում հատկապես գեղարվեստական երկերի ուսուցման ժամանակ:

2. Օտարաբանություններից առավել դժվար է շարահյուսական մակարդակի երևույթների ուսուցումը:

3. Ժամանակակից հայերենում առկա օտարաբանությունները հիմնականում ռուսերենից են կամ ռուսերենի միջնորդությամբ այլ լեզուներից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Եզեկյան Լ. (2007)**, Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, ԵՊՀ հրատ.:
2. **Զաքարյան Հ. (2002)**, Օտարաբանությունների արտամղման միտումը հայերենում, «Բանբեր Երևանի համալսարանի (հասարակական գիտություններ)», №1, էջ 133-140:
3. **Իշխանյան Ռ. (1981)**, Ակնարկ հայերենի տերմինաշինության, Երևան, «Լույս» հրատ.:
4. **Լևոն Շանթ (1989)**, Երկեր, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
5. **Հայրապետյան Ա. (2011)**. Օտար բառերի բառարան, Երևան, Հեղինակային հրատարակություն:
6. **Հովհաննիսյան Լ. (1983)**, XVII դարի գրաբարը, «Լեզվի և ոճի հարցեր», մաս VII, Երևան, էջ 116-196:
7. **Ղարիբյան Ա. (1954)**, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, Հայպետհրատ, 562 էջ:
8. **Նար-Դոս (1978)**, Պատմվածքներ, վիպակներ, Երևան, «Լույս» հրատ.:
9. **Րաֆֆի (1984)**, Երկերի ժողովածու, հ. IV, Երևան, Հայպետհրատ:

REFERENCES

1. **Yezekyan L. (2007)**, Hayoc lezvi otwagitowt'yown /Stylistics of the Armenian language/, Yerevan, Yerevan State University Publishing Houses.
2. **Zakaryan H. (2002)**, O'tarabanowt'yownneri artamghman mitowmy' hayerenowm /The trend of foreign language expulsion in Armenian/, "Banber of Yerevan University (social sciences)", №1, p. 133-140.
3. **Ishkhanyan R. (1981)**, Aknark hayereni terminashinowt'yan /Overview of Armenian Terminology/, Yerevan, "Luys" Publishing House.
4. **Levon Shant (1989)**. Erker /Yerker/, Yerevan, "Soviet Writer" Publishing House.

5. **Hayrapetyan A. (2011)**, O'tar bar'eri bar'aran /Dictionary of foreign words/, Yerevan, Author's edition.
6. **Hovhannisyan L. (1983)**, XVII dari grabary' /Grabar of the 17th century/, "Issues of language and style", part VII, Yerevan, pp. 116-196.
7. **Gharibyan A.(1954)**, Hayoc lezvi dasavandman met'odika /Methodology of teaching the Armenian language/, Yerevan, Haypethrat.
8. **Nar-Dos (1978)**, Patmvac'qner, vipakner /Stories, novels/, Yerevan, "Luys" Publishing House.
9. **Raffi (1984)**, Erkeri jhoghovac'ow /Collected works/, vol. IV, Yerevan, Haypethrat.

Zhenya Hovhannisyan

The areas of foreign sciences application in modern literary Armenian

Conclusion

Key words and expressions: *foreign words, borrowings, verbal foreign words, phonetic, lexical and syntactic foreign forms, phonetic foreignization, grammatical wrongs, true translation, purism, lexica and etymology of words.*

This article presents a linguistic analysis of foreign borrowings found in literary works taught in high school. Specifically, it examines linguistic phenomena that may hinder students' ability to maintain purity of speech. The study addresses common inaccuracies at the phonetic, lexical, and syntactic levels. It highlights the connections between foreign words and borrowings, comparing various linguists' perspectives on the issue.

Many linguists classify certain borrowings as foreign words, which creates challenges in understanding and integrating them into the vocabulary.

Based on the results of research conducted among high school students, the study identifies the main reasons that prevent foreign-derived constructions from being replaced by Armenian equivalents.

By analyzing several literary texts from the high school curriculum, the frequency of these borrowings is examined. Given the extent of their usage in literature, the article recommends regularly addressing this topic in grades 10 through 12, explaining the inappropriateness of such usages and teaching the Armenian alternatives.

The domains in which foreign borrowings are used in modern literary Armenian are also explored—both in everyday conversational language and in artistic literary styles.

This research can serve as a guide for teachers when teaching about borrowings.

Additionally, it is advisable to develop relevant methodological materials that will ease the work of both teachers and students, thereby supporting a more conscious process of linguistic purification.

Such an approach can serve as a foundation for innovative educational initiatives aimed at the development of linguistic policy.

Женя Оганнисян

**Области применения иноязычных слов в современной армянской
литературе**

Заключение

***Ключевые слова и выражения:** иностранные или иноязычные слова, ассимиляция, фонетические и синтаксические заимствования, грамматические ошибки, правильный перевод, пуризм, лексика и происхождение слов.*

В данной статье проведён лингвистический анализ заимствований, встречающихся в художественных произведениях, входящих в школьную программу старших классов. В частности, рассматриваются явления, которые могут затруднить формирование чистой и правильной речи учащихся. Анализируются типичные отклонения на фонетическом, лексическом и синтаксическом уровнях. Показаны связи между иностранными словами и заимствованиями, проведено сопоставление различных мнений лингвистов по этому вопросу. Многие исследователи считают некоторые заимствования иностранными словами, что затрудняет их восприятие и включение в словарный состав.

На основе результатов исследования, проведённого среди старшеклассников, выявлены основные причины, мешающие замещению иноязычных конструкций армянскими эквивалентами. Изучив ряд программных художественных произведений, мы проанализировали частотность использования заимствований в них.

Учитывая объёмы употребления таких слов в художественной литературе, предлагается регулярно поднимать данный вопрос в 10–12 классах, объяснять нецелесообразность подобных употреблений и обучать армянским эквивалентам.

Показаны сферы употребления заимствований в современном литературном армянском языке как в повседневной разговорной речи, так и в художественно-литературном стиле.

Данное исследование может служить методическим пособием для учителей при обучении заимствованным словам.

Кроме того, целесообразно разработать соответствующие методические материалы, которые облегчат работу как преподавателей, так и учащихся, способствуя осознанному процессу языкового очищения. Такой подход может стать основой для инновационных образовательных инициатив, направленных на развитие языковой политики.

Ժենյա Հովհաննիսյան – Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի մասնագետ, նույն ամբիոնի հայցորդ: j.m.5.1997@mail.ru

Zhenya Hovhannisyan- Specialist at the department of armenian language and methods of teaching them at Khachatur Abovyan armenian state pedagogical university, applicant for the same department. j.m.5.1997@mail.ru

Женя Оганнисян - специалист кафедры армянского языка и методики их преподавания-Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна: соискатель той же кафедры. j.m.5.1997@mail.ru

Խմբագրություն է ուղարկվել 30.01.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 13.02.2025թ.

Հրապարակման է ներկայացվել 10.09.2025թ.